ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/92

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԶարՄան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ.Աղաբալյանի (լիազորագիր՝ տրված 16.04.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.04.2021թ. թիվ 26/26-1/5382-2021 գրությամբ «ԶարՄան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 06.04.2021թ. թիվ 08.1//6692-2021 գրության հիման վրա 12.04.2021թ. թիվ 26/26-1/5382-2021 գրությամբ նախաձեռնել է «ԶարՄան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՋարՄան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՋարՄան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/92 ընթացակարգի շրջանակներում 16.04.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու պատճառ է հանդիսացել աշխատակցի կողմից թույլ տրված տեխնիկական սխալը, այն է՝ գնային առաջարկում արժեքի հանրագումարի փոխարեն նշվել է միավորի արժեքը, ինչի արդյունքում Ընկերության առաջարկը ներկայացվել է շատ ցածր գնով: Քանի որ Ընկերությունը հանդիսանում է սոցիալական ձեռնարկատիրություն և ունի սահմանափակ ռեսուրսներ, այդ պատճառով ներկայացված գնային առաջարկը Ընկերության կողմից հետ է վերցվել քանի որ ի վիճակի չէր այդ գնային առաջարկով մատակարարել խաղալիքները: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, թե ինչպես են գնային առաջարկը հետ վերցրել, Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ գրությամբ հրաժարվել են Ընթացակարգին հետագա մասնակցությունից, քանի որ այդ արժեքով չեն կարող մատակարարել խաղալիքները»:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.04.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2021 թվականի մարտի 18-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/16» ծածկագրով կազմակերպված կրթական խաղերի, դիդակտիկ նյութերի գնման գործընթացին հայտ է ներկայացրել «ՋարՄան» ՍՊԸ-ն, որը բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն 2021 թվականի մարտի 30-ի գրության համաձայն վերջինս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ «ԶարՄան» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը /կցվում է/՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/92 ընթացակարգի շրջանակներում 16.04.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԶարՄան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 29.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԶարՄան» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ը՝ դիմում-հայտարարությունը, լրացված չէ հրավերի պահանջներին համապատասխան, 22-րդ և 23-րդ չափաբաժինների համար՝ Հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը լրացված չեն հրավերի պահանջներին համապատասխան, իսկ Հավելված 2-ում՝ Գնային առաջարկում, նշված չափաբաժինների գնային առաջարկը ներկայացված է միասնական թվով, ինչը շտկման ենթակա չէ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա անհամապատասխանությունները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ 31.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԶարՄան» ՍՊԸ-ն սահմանված

ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն գրությամբ տեղեկացրել է, որ տեխնիկական վրիպակի արդյունքում գնային առաջարկը բոլոր չափաբաժինների համար ներկայացվել է մեկ օրինակ խաղերի հաշվարկով, ինչի պատճառով վերջինս հրաժարվում է ապրանքները մատակարարել հրավերով սահմանված քանակությամբ և որոշում կայացրել «ԶարՄան» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

5. «ԶարՄան» ՍՊԸ-ն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված 30.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԶարՄան» ՍՊԸ-ի կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/16» ծածկագրով կրթական խաղերի և դիդակտիկ նյութերի ձեռքբերման համար հայտարարված մրցույթին մասնակցության համար ուղարկված Հայտի հավելված 2-ում /գնառաջարկում/ թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝ ըստ որի փաստաթղթում «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) տառերով և թվերով/» սյունակում չափաբաժինների հանրագումարի փոխարեն ներկայացվել է միայն 1 (մեկ) օրինակ խաղերի գները: Սխալը առավել պարզ ներկայացնելու համար կից ներկայացնում ենք փաստաթղթի ճշտված տարբերակը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2021թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, մենք գիտակցում ենք, որ չենք կարող փոփոխել ներկայացված գնառաջարկը, սակայն մեր կողմից վրիպակի արդյունքում ներկայացված գներով ի վիճակի չենք մատակարարել նշված քանակի ապրանքները:

Խնդրում ենք, հաշվի առնելով թույլ տրված վրիպակը չեղյալ համարել մեր մասնակցության հայտը»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2021թ. թիվ 26/26-1/5382-2021 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 06.04.2021թ. թիվ 08.1//6692-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև

«ԶարՄան» ՍՊԸ-ի կողմից հայտնած դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

<u>գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԶարՄան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 29.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԶարՄան» ՍՊԸ-ի կողմից հայտով

ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ը՝ դիմում-հայտարարությունը, լրացված չէ հրավերի պահանջներին համապատասխան, 22-րդ և 23-րդ չափաբաժինների համար՝ Հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը լրացված չեն հրավերի պահանջներին համապատասխան, իսկ Հավելված 2-ում՝ Գնային առաջարկում, նշված չափաբաժինների գնային առաջարկը ներկայացված է միասնական թվով, ինչը շտկման ենթակա չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ 31.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՋարՄան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն գրությամբ տեղեկացրել է, որ տեխնիկական վրիպակի արդյունքում գնային առաջարկը բոլոր չափաբաժինների համար ներկայացվել է մեկ օրինակ խաղերի հաշվարկով, ինչի պատճառով վերջինս հրաժարվում է ապրանքները մատակարարել հրավերով սահմանված քանակությամբ և որոշում կայացրել «ՋարՄան» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«ՋարՄան» ՍՊԸ-ն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված 30.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՋարՄան» ՍՊԸ-ի կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/16» ծածկագրով կրթական խաղերի և դիդակտիկ նյութերի ձեռքբերման համար հայտարարված մրցույթին մասնակցության համար ուղարկված Հայտի հավելված 2-ում /գնառաջարկում/ թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝ ըստ որի փաստաթղթում «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) տառերով և թվերով/» սյունակում չափաբաժինների հանրագումարի փոխարեն ներկայացվել է միայն 1 (մեկ) օրինակ խաղերի գները: Սխալը առավել պարզ ներկայացնելու համար կից ներկայացնում ենք փաստաթղթի ճշտված տարբերակը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2021թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, մենք գիտակցում ենք, որ չենք կարող փոփոխել ներկայացված գնառաջարկը, սակայն մեր կողմից վրիպակի

արդյունքում ներկայացված գներով ի վիճակի չենք մատակարարել նշված քանակի ապրանքները:

<u>Խնդրում ենք, հաշվի առնելով թույլ տրված վրիպակը չեղյալ համարել մեր մասնակցության հայտը</u>»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ԶարՄան» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված խախտում, ***<u>քանի որ Ընթացակարգի շրջանակներում հայտերը բացվելուց հետո «ԶարՄան» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 30.03.2021թ. գրությամբ խնդրել է չեղյալ համարել իր կողմից ներկայացված մասնակցության հայտը, այսինքն, ըստ էության, հրաժարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հետագա մասնակցությունից:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.04.2021թ. թիվ 26/26-1/5382-2021 գրությամբ «ԶարՄան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՀարՄան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**